պատկ. 181). առանց չէնքի անկարելի էր, որ արձանագրութիւնն այդպիսի անկանոն բոլորակի մէջ գրուէր. ապա, ուրեմն, այդ շինութիւնը, այսինքն գաւիթը, վերջացած էր 1234 թուից առաջ և 1217 թուից յետոյ, երբ վերջացաւ տաճարի շինութիւնը։ Այս ժամանակամիջոցը կարելի է աւելի ևս սահմանափակել. դրան աջ կողմը արձանագրութիւնների մի խումբ ունինք, որոնցից մէկով Մխիթար և Սարգիս եղբայրները գաւթին քառասուն դեկան են նուիրել և եկեղեցուն էլ «զմարտիրոսդն», վկայաբանութիւն կամ սովորական անունով Յայսմաւուրք (Յաւել. Ա. 130, պատկ. 182)։ Այս արձանագրութիւնը կից է Զազայի արձանագրութեան և նոյն գրչով, որ, ինչպէս գիտենք՝ կարող էր լինել ոչ վաղ քան 1222 թիւը, երբ մեռաւ Գրիգոր Խաղբակեանը, ուրեմն և գաւթի շինութիւնը պէտք է դնել 1222–1234 թ. թ.-ի մէջ։ Ժամատան կամ գաւթի շինութեան ժամանակակից է Պետրոսի և Հոգէդեղի, Տիրատուրի արձանագրութիւնները, որ միասին են գրած. վերջինը իւր նուէրը գաւթին է տուել (Յաւել. Ա. 131–132, պատկեր 182), ինչպէս հիւսիսային կողմից դէպի գաւիթը տանող մեծ մուտքի կիսով չափ կանգուն կամարի արձանագրութիւնը Խաչիկի անունով (Յաւել. Ա. 133)։ Գաւթի շինութեան շրջանից է, գուցէ և վերջաւորութիւնը Զազի նուիրաբերութիւնների հետ նաև Գրիգոր Խաղբակեանի յիշատակին կանգնած խաչարձանը ՈՁԲ թուականին, որի նկարագրութիւնն ու գնահատութիւնը տեսանք առաջ(*)։

Բուն տաճարի հիւսիսային կողմն է Պողոս-Պետրոս փոքրիկ եկեղեցին, տարաբաղդաբար, շատ վատ վիճակի մէջ մեզ հասած. վերոյիշեալ առաքեալների պատկերաքանդակները զարդարում են դրան աջ և ձախ կողմերը, համեմատաբար այնպիսի գեղեցկութեամբ, որ քիչ է պատահում մեր քանդակագործութեան մէջ(**)։ Սոյն եկեղեցու մի զարդն էր նաև այն սիրամարգը (պատկ. 183), որ գլորուած էր ձորը և դժուարութեամբ բերինք եւ հաստատեցինք պատի վերայ. քարի ձեւից երեւում է, որ վերին անկիւնաքար պիտի լինէր, ուրեմն և սպասելի էր մի երկրորդը գտնել։ Եկեղեցու շինութեան արձանագրութիւնը, որ գտնւում է դրան կամարակալ քարի վերայ, սկզբում դեղագրով է եղել և ապա քիչ մասը փորագրուել է և կիսատ մնացել, որից սակայն պարզ է, որ եկեղեցին շինուած է ՉԺԹ (= 1270) թուին Երեմիայի առաջնորդութեան ժամանակ հաւանօրէն Ղազբակայ թոռը Վասակի կողմից(***)։ Զազի արձանագրութիւնից ևս տեսանք (Յաւել. Ա. 125), որ Գրիգոր Խաղբակեանի որդին էր «Վա(սակ)». մի ուրիշ տեղ՝ Գրիգորի արձանագրութեան տակ (Յաւել. Ա. 124), անմիջապէս կցուած է մի եղծուած արձանագրութիւն, որից կարդացւում է «. . ակս որ բազում ընծայք ետու յեկեղեցիս | . . . . |»։ Ի հարկէ, միայն հաւանական ենթադրութեամբ կարելի է ընդունել, թէ «. . ակս» մնացորդն է «(Վաս)ակս» անուան. որդին իւր նուիրաբերութիւնը փորագրել է տուել անմիջապէս հօր արձանագրութեան տակ (պատ. 180)։ Այս տուեալներով հաստատ կարող ենք ասել, Խաղբակի թոռն էր, Գրիգորի և Զազի որդին Վասակ, որի ժամանակ կամ նորա կողմից շինուած է Պողոս-Պետրոսը։ Այսպիսով Աղջոց Ս. Ստեփանոսի բոլոր չէնքերը պէտք է համարել Խաղբակեաններից Վասակ Ա.-ի եղբայր Գրիգորի ճիւղի ստեղծագործութիւն։ Երեմիա առաջնորդի անուան յիշատակութիւնն ունինք Վարդանի կողմից իւր Դանիէլի մեկնութեան յիշատակարանի մէջ, որ վերջաւորել է հէնց այստեղ, վայելելով նորա ասպնջականութիւնը(*)։ Սորա ժամանակ Գոհար անունով կինը քսան դահեկան նուէր է տուել և մի ժամ ստացել, իսկ Աթանաս քահանան (? եղծուած) քառասուն դահեկան և երկու ժամ ստացել, մէկը իւր, միւսը հօրը՝ Թադէոսի (?) համար (Յաւել. 134–135)։

Բազմաթիւ են խաչարձանները թափթփած այստեղ այնտեղ. դոցանից մէկը Մարտիրոս քահանայինն է կանգնած բարձր պատուանդանի վերայ, տաճարի հիւսիսային պատին կից, 1258 թուին յիշատակ իւր ծնողներին (Ա. 136)։

Բազմաթիւ են նաև անթուական արձանագրութիւնները, որոնց մասին կը յիշենք յետոյ, բայց դոցանից մէկը պատմական անձնաւորութիւնների հետ կապուած լինելով, հնարաւոր է մօտաւոր ժամանակը գտնել. Գրիգոր վարդապետի առաջնորդութեան ժամանակ Աթապակ Սադունի քարտուղար Ղարասլանը միաբանել է սուրբ ուխտին, տալով քսան դահեկան, և ստացել է տարին մի պատարագ սուրբ Սարգսի տօնին (Յաւել. 137. պատկ. 180)։ Գրիգոր վարդապետի առաջնորդութիւնը կարող էր միայն 1279 թուից յետոյ լինել, երբ մեռաւ Երեմիայի յաջորդ Յովսէփ վարդապետը. սորա գործունէութեան մասին տեղեկութիւն չունինք, բայց Պողոս–Պետրոսի դրան հիմք կազմող աստիճանների վերայ կայ մի արձանագրութիւն նորա անուան յիշատակութեամբ ոմն Դեղի կողմից, որ իւր այդին նուէր է տալիս «յառաջնորդութի. Ցսէփ վարդն» և ստանում երկու ժամ (Յաւել. Ա. 138)։ Նոյն դրան աջ կողմից, Պետրոսի քանդակի յետեւը, կայ մի ուրիշ արձանագրութիւն ոմն Շահերի կամ Շահեսի կողմից, որ քսան դահեկան նուէր է տալիս և մի ժամ ստանում (Ա. 139. պատկ. 25)։ Յովսէփ վարդապետին յիշում է Ստեփանոս Օրբէլեան իւր ժամանակագրութեան մէջ, որ դեռ ևս անտիպ է. «ՉԻԸ կա-

(*) Խաղբակեանք Ա. եր. 64, 81. պատկ. 20։
(**) Անդ, 84–86. պատկ. 25։
(***) Խաղբակեանք Ա. 85–86։

(*) Անդ, 86։ Ձեռ. № 2049, 359բ։ Շողակաթ, Հայագիտական ժողովածու, եր. 33։